ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
24.05.2024 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ»
հասարակական կազմակերպության 2023 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ»
1.2 ՀՎՀՀ-ն		02515951
1.3 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ԱԲՈՎՅԱՆ Փ. 9
1.4 Պետական գրանցման համարը		211.171.1057612
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2002-02-06
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)093041527
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		annamkhitaryan1980@gmail.com
2 Գործադիր մարմնի ղեկավարի՝		
Անունը	Ազգանունը	Պաշտոնը
ԳԱԳԻԿ	ԾԱՌՈՒԿՅԱՆ	Նախագահ
3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը		
Օլիմպիական խարտիայի սկզբունքների հիման վրա հանրապետությունում զարգացնել և պաշտպանել օլիմպիական շարժումը, աջակցել ֆիզիկական կուլտուրայի և սպորտին զարգացմանը, օլիմպիական գաղափարների տարածմանը, պայքար ծավալել սպորտում ազգային, ռասայական, քաղաքական, կրոնական և այլ խտրականությունների դեմ, դիմակայել սպորտը քաղաքական նպատակներով շահարկման փորձերին.		
Ամենուրեք սպորտն ի սպաս դնել մարդու ներդաշնակ զարգացմանը, աջակցել մարդկային արժանապատվությունը պաշտպանող հասարակության ստեղծմանը.		
Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի օգնությամբ երիտասարդությանը դաստիարակել մարզական ազնիվ պայքարի ու մրցակցի հանդեպ առաքինի վերաբերմունքի ոգով.		
Աշխատանք ծավալել հանրապետության մարզիկներին ու մարզական կազմակերպություններին ընդգրկելու «Մարզիկներն հանուն խաղաղության» շարժման մեջ.		
Ի նպաստ մարզական համագործակցության հաստատման՝ գործնական կապեր հաստատել ազգային օլիմպիական կոմիտեների, մարզական միջազգային ֆեդերացիաների հետ, մասնակցել Օլիմպիական համերաշխության ծրագրին.		
Գրականության, արվեստի և լրատվական տարբեր միջոցներով պրոպագանդել օլիմպիական գաղափարները, հասարակությանը ծանոթացնել հանրապետությունում ձեռք բերված ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նվաճումներին, ուսումնասիրել և տարածել արտասահմանյան մարզական կազմակերպությունների առաջավոր փորձը, անցկացնել «Օլիմպիական օր» կամ «Օլիմպիական շաբաթ» նշանաբանով միջոցառումներ.		
Նպաստել ուսումնական հաստատությունների ծրագրերում օլիմպիզմի գաղափարների և սկզբունքների ներառմանը և տարածմանը: Զբաղվել օլիմպիական գաղափարներին նվիրված հաստատությունների, Օլիմպիական թանգարանի և օլիմպիական շարժման հետ կապված մշակութային ծրագրերի ստեղծմամբ ու զարգացմամբ.		
Աջակցել «Սպորտը բոլորի համար» շարժմանը, ինչպես նաև բարձրագույն նվաճումների սպորտի զարգացմանը.		
Աջակցել մարզական ղեկավար կադրերի պատրաստմանը, կազմակերպել սեմինար-դասընթացներ.		
Կանոնադրական գործունեության շրջանակներում՝ ունեցած միջոցների սահմաններում ՀԱՕԿ-ի օլիմպիական հավաքական թիմի անդամներին, վարչական և սպասարկող անձնակազմին, օլիմպիական մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին, օլիմպիական մարզաձևերի ազգային հավաքական թիմի անդամներին ցուցաբերել օգնություն, մարզական թոշակ և այլ օժանդակություն.		
Պայքարել ՄՕԿ-ի, Համաշխարհային հակադոպինգային կազմակերպության (WADA) և միջազգային ֆեդերացիաների կողմից արգելված դեղամիջոցների և մեթոդների օգտագործման դեմ, հարգվեն և կիրառվեն Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքի պահանջները անցկացվող բոլոր միջոցառումների ընթացքում.		
Համագործակցել պետական և ոչ պետական մարմինների հետ, եթե այդ գործունեությունը չի հակասում օլիմպիական խարտիայի դրույթներին		
4 Հասարակական կազմակերպության՝		
4.1 Անդամների թիվը		32
4.2 Կամավորների թիվը		5
5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը		3

6. Իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը
1	Մօկի կողմից տրամադրված մարզիկներին թոշակի վճարում	ք.Երևան	Լավագույն մարզիկներին թոշակի վճարում	Ավարտված
2	Զմեռային թոշակի վճարում	ք.Երևան	Զմեռային մարզաձևերի լավագույն մարզիկների թոշակի վճարում	Ավարտված
3	Արգելված նյութերի ճանաչման բջջային հավելվածի ստեղծում և սեմինարի անցկացում	ք.Երևան	Ստեղծել հեռախոսի հավելված արգելված նյութերի փնտրման համար այֆոնի և սամսունգի համար,կազմակերպվել է սեմինար մարզիկներին ծանոթացնել տվյալ հավելվածների հետ	Ավարտված

7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1	2023թ Զմեռային օլիմպիական փառատոն	ք.Իտալիա Ֆրիուլի Վենետիկ Ջուլիա	Ավարտված	Եվրոպայի երիտասարդության օլիմպիական փառատոնների մասնակցության ապահովում	Բավարար
2	2023թ 3-րդ Եվրոպական օլիմպիական խաղեր	ք.Լեհաստան Կրակով	Ավարտված	Զմեռային օլիմպիական խաղերին Հայաստանի պատվիրակության մասնակցության ապահովում	Բավարար
3	2023թ. Ամառային օլիմպիական փառատոն	ք.Մարիբոր Սլովենիա	Ավարտված	Եվրոպայի երիտասարդության օլիմպիական փառատոններին մարզիկների մասնակցության ապահովում	Բավարար

8. Տարեկան մուտքեր՝

8.1 Դրամական միջոցները	3,452,788,625
8.2 Գույքը	
Ընդամենը	3,452,788,625

9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ

Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները
1	184,160,576	ՀՀ կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն
Հ/Հ	9.2 Գույքը	
1		
Ընդամենը	184,160,576	

10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝

10.1 Դրամական միջոցները		3,425,156,740
10.2 Գույքը		
Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		3,425,156,740

11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝

11.1 Դրամական միջոցները		171,980,621
11.2 Գույքը		
Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		171,980,621

12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝

Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1	բանկային հաշվի տոկոսի կապիտալացում	131,152	131152
Ընդամենը		131,152	

Նշումներ

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____4_____ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրություն, անունը, ազգանուն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

ՀՀ, ք. Երևան, Խանջյան 19, 4-րդ հարկ, գրասենյակ 5, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ»ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

ԿԱՐԾԻՔ

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀԿ)՝ 2023թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունը, որը ներառում է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված հաշվետվության 7-րդ, 9-րդ և 11-րդ դաշտերում լրացված տվյալները:

Մեր կարծիքով, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ» հասարակական կազմակերպության կից ներկայացված հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունը, որը ներառում է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված հաշվետվության 7-րդ, 9-րդ և 11-րդ դաշտերում լրացված տվյալները, բոլոր էական առումներով ճշմարիտ է ներկայացնում 2023 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա մուտքերի և ստացման աղբյուրների, ինչպես նաև օգտագործված միջոցների պատկերը՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Անկախ ենք ՀԿ-ից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝այդ պահանջների համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հասարակական կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվությունը, որը զերծ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումից:

ՀՀ, ք. Երևան, Խանջյան 19, 4-րդ հարկ, գրասենյակ 5, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվությունը պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է ՀԿ-ի անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել ՀԿ-ն կամ դադարեցնել դրա գործունեությունը, կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության կազմման գործընթացը վերահսկելու համար:

ԱՈՒԴԻՏՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝խարդախությունների կամ սխալների հետևանքով հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվության օգտագործողների՝ դրա հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ՝ ՀԿ-ի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

ՀՀ, ք. Երևան, Խանջյան 19, 4-րդ հարկ, գրասենյակ 5, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա՞ է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել ՀԿ-ի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, և թե արդյո՞ք ֆինանսական հաշվետվությունը ներկայացնում է դրա հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. Երևան- 17.05.2024թ.

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

Գլխավոր տնօրեն՝ Գոռ Դավթյան

Որակավորված աուդիտոր՝ Գայանե Թովմասյան

«ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» ՊԱՍԱԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ "PKF AUDIT SERVICE" LIMITED LIABILITY COMPANY IN ARMENIA 00419022

ՀՀ, ք. Երևան, Խանջյան 19, 4-րդ հարկ, գրասենյակ 5, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicelic@gmail.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

Digitally signed by
Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.05.2024 17:24